

պատարագի մէջ» : Եկողները կը պատասխանեն . «Թո՛ղ այդպէս ըլլայ» , ու ետ դառնալով՝ Եղիազարի խօսքերը կը հաղորդեն Մուղնեցիին , որ շրջաբերականով մը կը հրամայէ Ս . Խաչի նաւակատեաց Շարաթ օրէն սկսեալ յիշել Յակոբ կաթողիկոսի անունը պատարագին մէջ :

Սեպտեմբեր 20ին Եղիազար Սկիւտարէն Ղալաթիա կը դառնայ ու այնտեղէն ընդունելութեան թուղթ մը կը գրէ Յակոբ կաթողիկոսին ու կը զրկէ Մուղնեցիին որ ան ալ կնքէ : Ասիկա հնարք մըն էր Եղիազարի կողմէ , որպէսզի ինք Կ . Պոլիս սպասէ՝ մինչև թուղթին պատասխան ընդունիլը կաթողիկոսէն : Անդին Մուղնեցիի կուսակիցները ծածկապէս Յակոբ կաթողիկոսի ուղղեալ բազմակնիք հանրագրութիւն մը կը պատրաստեն , ուր նկարագրելով վերջին անցուդարձերը՝ կը խնդրեն որ բանադրէ Եղիազարի երկու երեք մարդիկը , որպէսզի թեւաթափ ըլլան , որովհետեւ , կ'ըսեն , բոլոր քաղաքը մեր կողմն է ու միայն երկու երեք հոգի միւս կողմին յարած են :

Այդ օրերուն Յովհաննէս Մուղնեցի մայրաքաղաքին երեւելիները կը համախմբէ Ս . Նիկողայոսի եկեղեցին ու կարգալ կու տայ իբր թէ Յակոբ կաթողիկոսէ այնինչ հասած թուղթ մը , որուն մէջ գրուած էր . «Վախճանեցաւ Հոգևորտէրը ու մենք նստանք անոր տեղ , ու հանգուցեալի կարգադրութեան համաձայն Յովհաննէս վարդապետն է ձեր առաջնորդը , ու ով որ չկամենայ ու հակառակի անոր՝ այգպիսին Աստուծոյ սուրին կը մատնեմ» : Ունկնդիրները հայրապետական այդ անդրանիկ զիրին պարունակութիւնը անպատշաճ կը գտնեն ու կը կասկածին անոր վաւերականութեան վրայ : Ետքէն ոմն Հալէպցի Դաւիթ վարդապետ Ս . Կէորգի խուցերէն մէկուն մէջ կը գտնէ